

**ՎՐԱՏԱՆՈՒՄ
ԺԱՄԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ**



IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն(ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սույն գրքույկը նախատեսված է Վրաստանի Հանրապետություն մեկնողների համար: Գրքույկը պարունակում է տեղեկատվություն Վրաստան մուտքի, վիզային ռեժիմի, կացության, ՎՀ քաղաքացիության, Վրաստանի աշխատանքային օրենսդրության վերաբերյալ, այդ թվում նաև ՎՀ-ում սեփական գործ սկսելու հիմունքների մասին: Բերվում են նաև միգրանտներին իրավական աջակցություն և նրանց շահերի պաշտպանությունն իրականացնող հիմնական կազմակերպությունների տվյալները:



IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն(ՍՍԿ)
Հայաստանյան առաքելություն



IOM • OIM

ՄՍԿ



ՄԱԶԾ

Սույն ուղեցույցը հրատարակվել է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի ֆինանսավորմանբ:

Կազմեցին՝ Քրիստինա Գալստյանը և Նունե Ասատրյանը

Տպագրության պատրաստեց՝ **ՄՍԿ Հայաստանյան առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժինը**:

© Հեղինակային իրավունքը պաշտպանված է: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հեղինակմերի և հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՍԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

Հրատարակիչ՝ Միգրացիայի Միջազգային կազմակերպություն



**IOM International Organization for Migration
OIM Organisation Internationale pour les Migrations
OIM Organización Internacional para las Migraciones**

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն(ՄՍԿ)
Հայաստանյան առաքելություն**

Հայաստան • Երևան 0010 • ՄՍԿ-ի գրասենյակ • Պետրոս Աղամյան փողոց 14, 1-ին հարկ
Հեռ.՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65
• Էլ.փոստ՝ iom@iom.am • <http://www.iom.int/armenia>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	5
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ԴԵՊԻ ՎՐԱՍՏԱՆ	6
ՎԻԶԱՆԵՐ ԵՎ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7
ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԵԼՔԸ ՎՐԱՍՏԱՆԻՑ	7
I. ՎՐԱՍՏԱՆ ՈՒՂԵՎՈՐՎԵԼՆ ԱՌԱՆՑ ՎԻԶԱՅԻ	10
II. ԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐԱՍՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	10
I. ՎԻԶԱՅԻ ԶԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՐՄԱՆՎԱԾ ՏՈՒՐՔԵՐԸ	11
ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ	12
ԺԱՄԱՆԱԿՎՈՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՉՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	12
ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ	14
ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ	
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՉՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	15
ՆԵՐԿԱՅԱՎԵԼԻՔ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	15
ԱՌԱՋԱՆԱԿԱՏՈՒԿ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	16
ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ	16
ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ	20
ԱՇԽԱՏԱՆՔ	21
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԶԵՌՔԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	23
ՄԻԿՐՈՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱԶԱԿՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	27

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Բնակչությունը՝ 4,473,000

ՀՆԱ-Ն բնակչության մեկ շնչի համար (ըստ Գնողումակության համարժեքության)` 2,844 ԱՄՆ դոլար

Դրամական փոխանցումներ՝ 346 մլն. ԱՄՆ դոլար

Զուտ միգրացիայի գործակիցը՝ -10.8 միգրանտ/1,000 բնակչություն

Ներգաղթողները՝ 4.3%

Կանանց թիվը ներգաղթողների շրջանում՝ 37.4%

15 տարեկանից ցածր բնակչության տոկոսը՝ 18.9%

ՄԻԱՎ- ի տարածվածությունը՝ 0.2%

Վրաստանի Հանրապետությունը ՄՄԿ-ի անդամ պետություն է հանդիսանում 2001թվականի հունիսից

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տեղակայված լինելով Եվրոպայի և Ասիայի միջև ընկած սահմանի վրա՝ Վրաստանը հանդիսանում է անդրեվրասիական և միջնայրացամաքային երթևեկության տարանցիկ ուղի, ինչն էլ, միևնույն ժամանակ, վերածում է այն ծագման, տարանցման և նպատակակետ հանդիսացող երկրի: Վրաստանը սահմանակից է 4 երկրների՝ Հայաստանին, Ադրբեյջանին, Ուստաստանին և Թուրքիային: 1,461 կմ ընդհանուր երկարությամբ պետական սահմանի (ներառյալ 310 կմ կազմող ծովային սահմանը) առկայության պայմաններում՝ երկրում գործում է սահմանի 19 պաշտոնական անցման կետ, որոնցից 16-ն ունի միջազգային, իսկ 3-ը՝ միջպետական կարգավիճակ:

Երկրի առջև ծառացած միգրացիայի հետ կապված հիմնական խնդիրներն են՝ Վրաստանից դեպի այլ երկրներ գրանցված միգրացիայի բարձր մակարդակը, ինչի համար շարժառիթ է հանդիսանում սեփական երկրում տնտեսական հնարավորությունների պակասը, աշխատող միգրանտների կողմից ուղարկվող դրամական փոխանցումների հոսքերի ծավալի և մասշտաբների վերաբերյալ տվյալներին տիրապետելու և փոխանցումների արդյունավետ կիրառման միջոցով միգրացիայի և զարգացման փոխկապակցումը խթանելու հետ կապված խնդիրները և տարանցիկ միգրացիան Վրաստանի միջով ու միասնական սահմանի հսկողությանն առնչվող հարցերը, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) խնդրի հետ կապված երկրի կողմից ստանձնած պարտավորության շարունակական կատարումը, երկրի ապաստարանի և ներգաղթի քաղաքականության մշակումը, ներքին տեղաշարժը Աբխազիայից և Հարավային Օսիայից, ինչպես նաև ներքին աշխատումի միգրացիան:

Ուստաստանը և Վրաստանը համաձայնության են եկել իրենց ընդհանուր սահմանի 80 տոկոսը սահմանագծելու վերաբերյալ՝ դեռևս չսահմանագծված թողնելով որոշ փոքր, ռազմավարական հատվածներ և ծովային սահմանը: Հայաստանի հետ ունեցած սահմանը դեռևս սահմանագծված չէ, իսկ Ադրբեյջանի հետ բանակցություններ են տարվում՝ կոնկրետ անցակետային տարածքներում ընդհանուր սահմանի տեղորոշման վերաբերյալ:

Որպես երկու երկրների միջև լարված դիվանագիտական հարաբերությունների հետևանք՝ Ուստաստանի կողմից ընդունված միակողմանի որոշման արդյունքում, 2006 թվականի կեսերից փակված են Վրաստանի և Ուստաստանի բոլոր ցանքային և ծովային սահմանները: Հետևաբար, նման իրավիճակի պայմաններում, Վրաստանի և Ուստաստանի միջև ներկայում չեն գործում ուղիղ տրասպորտային կապեր:

1990-ականների սկզբին, երկու ընդհարում տեղի ունեցավ մի կողմից՝ Վրաստանի կենտրոնական կառավարության և մյուս կողմից՝ Արխագիայի և Յարավային Օսիայի Ինքնավար Յանրապետությունների միջև։ Այս ընդհարումների արդյունքում, Վրաստանի կառավարությունն այժմ հսկողություն չի իրականացնում այս երկու հակամարտող տարածքների նկատմամբ՝ ներառյալ նշված տարածաշրջաններում կատարվող տեղաշարժերի հսկողությունը, մասնավորապես՝ Ռուսաստանից և դեպի Ռուսաստան կատարվող սահմանի անցնան հարցերում։ Արխագիայի և Վրաստանի միջև «սահմանը»՝ ճշշտ Ինգուրի Կամրջի վրա, հսկվում է ԱՊՀ խաղաղապահ ուժերի կողմից։ Վրաստանի քաղաքացիներն այսօր չեն կարող մուտք գործել Արխագիա՝ բացառությամբ Գալիի շրջանի։ Գալիի շրջանում տեղի են ունենում երկու սահմաններում տեղահանված անձանց (ԵՍՏՄ) մեկը մյուսին հաջորդող զգակի տեղաշարժեր դեպի իրենց տներ որտեղ նրանցից շատերը հաստատվում են սեղոնային և անգամ մշտական բնակության։ Յարավային Օսիայի հետ «սահմանը» հսկվում է Յարավային Օսիայի գործող իշխանությունների կողմից, իսկ Վրաստանի քաղաքացիները կարող են այնտեղ մուտք գործել միայն այն պարագայում, եթե այդ իշխանությունները տան իրենց թույլտվությունը։

Վրաստանի կառավարությունը խիստ քաղաքականություն է իրականացնում Վրաստան ապօրինաբար մուտք գործող օտարերկրացիների նկատմամբ, մասնավորապես՝ եթե հարցը վերաբերվում է հակամարտության գոտիների՝ Արխագիայի և Օսիայի միջով Վրաստան մուտք գործելուն։ Սա իիննականում վերաբերվում է այն օտարերկրացիներին, որոնք, գիտակցաբար կամ անգիտակցաբար, մուտք են գործել Վրաստան՝ երկիր մտնելիս պաշտոնապես չգրանցվելով, ինչն էլ առավել հաճախ հայտնաբերվում է այն ժամանակ, եթե այդ օտարերկրացիները փորձում են դրլս գալ Վրաստանի տարածքից։ Սովորաբար, այս տարանցիկ միգրանտները սահմանն ապօրինաբար անցնելու համար ենթարկվում են պատասխանատվության՝ համաձայն Վրաստանի Քրեական Օրենսգրքի 344-րդ Հոդվածի։

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ԴԵՊԻ ՎՐԱՍՏԱՆ

Վրաստանի ներգաղթի մասին օրենսդրությունը ամբողջովին և իրավաբանորեն չի կանոնակարգում Վրաստանում աշխատանքի ընդունված կամ ձեռնարկատիրական գործունեությամբ գրաղվող օտարերկրացիների հետ կապված խնդիրները և սովորական մուտքի արտոնագրով՝ վիզայով մուտք գործող անձանց համար, նրանց՝ երկիր մուտք գործելու առաջին իսկ րոպեից չի նախատեսում աշխատանքի կամ տնտեսական գործունեություն ծավալելու հետ կապված որևէ սահմանափակում։ Գոյություն չունի աշխատանքային միգրացիայի մասին հասուկ օրենսդրություն և օրենքը չի սահմանափակում Վրաստանում գտնվող օտարերկրացիների ձեռնարկատիրական գործունեության ծավալումը։

Օտարերկրացիների մասին օրենքում նշվում է, որ ժամանակավոր բնակության թույլտվություն կարող է տրվել Վրաստանում աշխատանքային գործունեություն ծավալող օտարերկրացիներին՝ ներառյալ անկախ, արտահաստիքային պայմաններով աշխատող անձանց։ Սա ենթադրում է, որ գրաղվածության հիմնա վրա կացության թույլտվություն ստանալու համար աշխատանքի թույլտվություն ունենալը պարտադիր չէ։

Աշխատանքի ընդունված անձանց համար չկան սահմանված իրավական նորմեր կամ պատասխանատու կառույցներ՝ ԵՄ ընդիանուր օրենսդրությամբ (Acquis) պահանջվող «աշխատանքի շուկայի ստուգման» իրականացման համար, որի միջոցով կստուգվեր օտարերկրացու աշխատանքի արդարացված լինելու տեղացի աշխատուժի առկայության պայմաններում։ Նմանապես, սեփական գործն ունեցող

անձանց հետ կապված՝ գոյություն չունի մի կառույց կամ սահմանված որևէ իրավական նորմ՝ ԵՄ ընդհանուր օրենսդրությամբ (Acquis) պահանջվող «տնտեսական օգուտների ստուգման» իրականացման համար, որի միջոցով կստուգվեր ցանկացած առանձին փոքր կամ միջին ձեռնարկատիրական ռիսկի/նախաձեռնության տնտեսական կենսունակությունը և շահեկանությունը Վրաստանի համար:

ՎԻԶԱՆԵՐ ԵՎ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Արտասահմանում գտնվող Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսությունների կողմից տրամադրված դիվանագիտական, ծառայողական և սովորական վիզաները հանդիսանում են բազմակի մուտքի վիզաներ:

Վրաստանի տարածք առաջին անգամ մուտք գործելիս՝ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսությունների, ինչպես նաև Վրաստանում հավատարմագրված համանան ներկայացուցչությունների օտարերկոյա աշխատակազմերը պետք է ունենան վիզաներ: Նրանց՝ հավատարմագրման ժամանակահատվածի ընթացքում բնակվելու և սահմանն անցնելու ժամանակ որպես հիմք է ընդունվում Վրաստանի Արտաքին գործերի նախարարության կողմից սահմանված կարգով տրամադրված հավատարմագրման քարտը՝ եթե այլ բան չի նախատեսվում միջազգային պարտավորություններով:

Արտասահմանում գտնվող Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսություններում 360 օր սահմանված ժամկետով տրամադրվող սովորական վիզան նախատեսված է բազմակի մուտքի համար:

2.Վրաստանի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, 360 օր ժամկետով տրված վիզան/մուտքի թույլտվությունը (վիզայի տուրքը՝ 100 Վրացական լարի) կարող է տրամադրվել Վրաստանի Պարեկային Ռատկանության (Ներքին գործերի նախարարության ստորաբաժնան կառույց) կողմից՝ Վրաստանի պետական սահմանի վրա գտնվող սահմանի անցնան կետերում: Բացառություն կարգով՝ որոշ դեպքերում, վիզան կարող է տրամադրվել միչև 90 օր ժամկետով:

3.Օտարերկրացու՝ Վրաստանում կացության համար հիմք է հանդիսանում վիզան կամ բնակության թույլտվությունը (նշտական կամ ժամանակավոր)՝ եթե այլ բան չի նախատեսվում սույն օրենքով կամ Վրաստանի միջազգային պայմանագրերով:

Վրաստանի տարածքում հնարավոր է երկարաձգել դիվանագիտական կամ ծառայողական տեսակի վիզաների վավերականության ժամկետը, ինչն իրականացվում է Վրաստանի Արտաքին գործերի նախարարության կողմից:

Նաև, հարկավոր է հաշվի առնել, որ սովորական վիզաներ ունեցող անձիք, Վրաստանի տարածքում վիզայով սահմանված ժամկետից երկար մնալու պարագայում, պետք է ժամանակավոր կամ մշտական կացության թույլտվություն ստանալու համար դիմեն Արդարադատության նախարարություն (www.cra.gov.ge)՝ մինչև նրանց վիզայի ժամկետի լրանալը:

Վրաստանի տարածքում, սույն օրենքով սահմանված օտարերկրացիներին մշտական կամ ժամանակավոր կացության թույլտվությունների տրամադրումը և դրանց վավերականության ժամկետների երկարաձգումն իրականացվում է Արդարադատության նախարարության կողմից:

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԵԼՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ

- Եթե օտարերկրացին Վրաստանի տարածքում է բնակվում իր օրինական կացության ժամկետը լրանալուց հետո, ապա մինչև տաս օրվա ընթացքում նա չի են-

թարկվի վարչական պատասխանատվության՝ տուգանքի տեսրով:

- Այն օտարերկրացին, որը Վրաստանի տարածքում է բնակվում իր օրինական կացության ժամկետը լրանալուց հետո մինչև երեք ամիս ժամանակահատվածի ընթացքում և կամավոր կերպով ցանկանում է լրել Վրաստանի տարածքը, ապա նա իրավունք ունի Վրաստանի տարածքից դուրս գալ առանց արգելքի: Նաև, օտարերկրացին պարտավոր է որոշակի գումարի չափով տուգանք վճարել նախքան երկրից դուրս գալը կամ՝ երկրից դուրս գալուց հետո: Գումարը չփական է առաջարկված այնքան ժամանակ, միշտ որ նա չփական է վերոնշյալ պարտավոր դիմաց:

Այն օտարերկրացին, որն անօրինական կերպով բնակվում է Վրաստանի տարածքում, իր օրինական կացության ժամկետը լրանալուց հետո ավելի, քան երեք ամիս և կամավոր կերպով ցանկանում է լրել Վրաստանի տարածքը, իրավունք ունի Վրաստանի տարածքից դուրս գալ առանց արգելքի: Նաև, նա պարտավոր է որոշակի գումարի չափով տուգանք վճարել նախքան երկրից դուրս գալը կամ՝ երկրից դուրս գալուց հետո: Նրան չի կարող տրամադրվել Վրաստանի վիզա կամ Վրաստան մուտքի թուլտվություն մեկ տարվա ընթացքում:

Օտարերկրացին պարտավոր է դուրս գալ Վրաստանի տարածքից նրա՝ անօրինական կացության վերաբերյալ փաստերի բացահայտումից հետո տաս օրվա ընթացքում:

Վրաստանի Արդարադատության նախարարությունը կամ դատարանը որոշում է կայացնում օտարերկրացու՝ Վրաստանից արտաքսելու մասին:

Վրաստանից արտաքսված օտարերկրացուն չի կարող տրամադրվել Վրաստանի վիզա կամ Վրաստան մուտքի թուլտվություն մեկ տարվա ընթացքում:

2006 թվականի հուլիսի 1-ից «Օտարերկրացիների իրավական կարգավիճակի մասին» Վրաստանի օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, Վրաստանի Արտաքին գործերի նախարարության կողմից չեն երկարաձգվում կամ տրամադրվում սովորական վիզաներ:

Այն անձիք, ովքեր նախատեսում են բնակվել Վրաստանի տարածքում ավելի երկար, քան սահմանված է նրանց սովորական տեսակի վիզայով, պետք է դիմեն Վրաստանի Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տարածքային ծառայություններին և ստանան ժամանակավոր կամ մշտական կացության թույլտվություն:

Դաստի՝ Կենտրոնական գրասենյակ՝ Ծերեթելիի պողոտա 67ա

Այն երկրների ցանկը, որոնց քաղաքացիները կարող են Վրաստանի տարածք մուտք գործել և բնակվել այնտեղ 360 օր՝ առանց վիզայի.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Շվեյցարիա, Լիխտենշտեյն, Նորվեգիա, Իսրայելի Պետություն, Կատիկան, Անդորրայի Իշխանություն, Սան-Մարինո, Իսլանդիայի Յանրապետություն, Միացյալ Արաբական Եմիրություններ, Թուվեյթ, Յարվային Կորեա, Քաթարի Պետություն, Բահրեյնի Թագավորություն, Օման, Բրունեյ, Սինգապուր, Ավստրալիա, Մոնակո, Նոր Զելանդիա, Բահամների Յանադաշնություն, Բարբադոս, Անտիգուա և Բարբուդա, Տրինիդադ և Տոբրագո, Սեյշելյան կղզիներ, Բուտսվանա, Խորվաթիա, Չիլի, Սենթ Թիբու և Նեվիս, Արգենտինա, Մալայզիա, Սերբիկա, Ուրուգվայ, Մարտիկիա, Պանամա, Կոստա Ռիկա, Յարավային Աֆրիկա, Բրազիլիա, Թաիլանդ, Բելիզ, Սաուդյան Արաբիա

«Հյուսիս-Կովկասյան տարածաշրջանի երկայնքով Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի անցման ստուգման կետերով օտարերկրյա ահարեկչական կազմակերպությունների անդամների ներքավիանցումը և գենքի ու կործանարար միջոցների ներմուծումը Ռուսաստանի Դաշնության տարածք կանխարգելելուն ուղղված միջոցառումների մասին» Ռուսաստանի Դաշնության կառավարության

1999 թվականի նոյեմբերի 5-ի N1223 որոշման համաձայն՝ մշակվել են սահմանի անցման կանոններ, որոնցով ամրագրվում է, որ Աղրբեջանի Հանրապետությունից ցամաքով ճանապարհորդելիս՝ Ռուսաստանի պետական սահմանը կարող են անցնել միայն ԱՊՀ երկրների քաղաքացիները և նրանց տրանպորտային միջոցները:

Դաշվի առնելով այն փաստը, որ 2009 թվականի օգոստոսի 18-ից Վրաստանը պաշտոնապես դադարեցրել է իր անդամակցությունը ԱՊՀ-ին, Վրաստանի քաղաքացիները հնարավորություն չեն ունենա մուտք գործելու Ռուսաստանի Դաշնության տարածք և դուրս գալու այնտեղից՝ Աղրբեջանի հետ ունեցած Ռուսաստանի ցամաքային սահմանով ճանապարհորդելիս:

Ըստ Շվեյցարիայի Դեսպանատան Ռուսաստանի Շահերի Բաժնի՝ Վրաստանի քաղաքացիներին, անգամ Ռուսաստանի վիզաների առկայության պարագայում, չի թույլատրվի մուտք գործել Ռուսաստանի Դաշնության տարածք Ռուսաստան-Աղրբեջան ցամաքային սահմանով:

Ռուսական կողմից «Վրաստանի և Ռուսաստանի միջև դարեր շարունակ բարի-դրագիական հարաբերությունների» վերաբերյալ կրկնվող հայտարարությունների ֆոնի վրա՝ վերոնշյալ որոշումը վկայում է ճիշտ հակառակի մասին:

Որքանով հայտնի է, Ռուսաստանի քաղաքացիները նախկինում օգտվել և դեռևս օգտվում են սահմանի անցման օրինական ստուգման կետերով Վրաստանի տարածք մուտք գործելու իրավունքից՝ առանց որևէ արգելքի կամ արիեստականորեն ստեղծված խոչընդոտների, և նրանք, ովքեր մտահոգություն են հայտնում ռուսերեն լեզվի օգտագործման աստիճանաբար նվազեցման վերաբերյալ, պետք է դրա պատճառը փնտրեն իրենց մեջ:

Գրավված տարածքների վերաբերյալ 2008 թվականի հոկտեմբերի 23-ին ընդունված Վրաստանի օրենքի համաձայն՝ գրավված են համարվում հետևյալ տարածքներ՝ Արխագիայի Ինքնավար Հանրապետությունը և Ցիխինվալիի շրջանը: 2008 թվականի օգոստոսի 12-ին կնքված Հրադադարի համաձայնագրի հիման վրա՝ վերոնշյալ օրենքը տարածվում է նաև հետևյալ տարածքների՝ Սաշիսերե շրջանի Պերսկի գյուղի, ինչպես նաև Կուլբա, Երեղվի և Ազիարա բնակավայրերի և Ախալգորի բնակավայրի վրա:

Վերոնշյալ օրենքով ամրագրված իրավական ռեժիմը գրավված տարածքներում ուժի մեջ կմնա միջև այնտեղ՝ Վրաստանի արդարադատության ամբողջական վերականգնումը:

Օրենքի համաձայն՝ արտասահմանյան երկրների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը գրավված տարածքներ թույլատրվում է միայն՝

ա) Արխագիայի Ինքնավար Հանրապետություն՝ Զագդիի բնակավայրի կողմից,

բ) Ցիխինվալիի շրջան (նախկին Հարավ Օսական Ինքնավար Մարզի տարածք)՝ Գորի բնակավայրի կողմից:

Արգելվում է արտասահմանյան երկրների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը գրավված տարածքներ որևէ այլ կողմից և դրա համար սահմանված է պատիճ՝ Վրաստանի Քրեական Օրենսգրքի համաձայն:

Բացարիկ դեպքերում՝ գրավված տարածքներ մուտք գործելու համար կարող է տրամադրվել հատուկ թույլտվություն՝ համաձայն Վրաստանի կառավարության իրավական Ակտերով նախատեսված կանոնակարգերի՝ պայմանով, որ մուտքը բխի Վրաստանի պետական շահերից, ինչպես նաև նապատակառողկած լինի հակամարտության՝ խաղաղ ճանապարհով լուծմանը և հետապնդի դեօկուպացիոն և մարդասիրական նպատակներ:

I. ՎՐԱՍՏԱՆ ՈՒՂԵՎՈՐՎԵԼՆ ԱՌԱՆՑ ՎԻԶԱՅԻ

Եթե Դուք հանդիսանում եք հետևյալ երկրներից որևէ մեկի քաղաքացի, ապա կարող եք Վրաստան ուղևորվել առանց վիզայի.

1. Եվրոպական Միության բոլոր անդամ պետություններ
2. Հայաստանի Հանրապետություն
3. Ալբրեթանի Հանրապետություն
4. Բելառուսի Հանրապետություն
5. Բուլղարիայի Հանրապետություն +++
6. Կանադա
7. Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն +
8. Եգիպտոսի Արաբական Հանրապետություն ++
9. Իրանի Իսլամական Հանրապետություն +
10. Իսրայել
11. ճապոնիա
12. Ղազախստանի Հանրապետություն
13. Ղրղզստանի Հանրապետություն
14. Մոլդովայի Հանրապետություն
15. Ռումինիա +
16. Շվեյցարիա
17. Տաջիկստանի Հանրապետություն
18. Թուրքիայի Հանրապետություն ++
19. Թուրքմենստան +
20. Ուկրաինա
21. Ամերիկայի Միացյալ Նահանգներ
22. Ուզբեկստանի Հանրապետություն
միայն դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցողներին +
միայն դիվանագիտական և պաշտոնական և հատուկ անձնագրեր ունեցողներին ++
միայն դիվանագիտական անձնագրեր ունեցողներին +++

Եթե Դուք չեք հանդիսանում վերոնշյալ երկրներից որևէ մեկի քաղաքացի, կամ եթե մտադիր եք Վրաստանում մնալ ավելի, քան 90 օր, ապա Դուք պետք է դիմեք՝ վիզա ստանալու համար:

- ## II. ԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐԱՆՁՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
- Վիզայի համար բոլոր դիմողների համար պարտադիր պահանջներն են.
1. Դիմելու օրվանից առնվազն վեց ամիս վավերականության ժամկետով անձնագիր,
 2. Վերջերս արված, գունավոր, անձնագրի չափսի լուսանկար,
 3. Պատշաճ կերպով լրացված և ստորագրված Դիմումի Զե,
 3. Հյուպատոսական համապատասխան տուրք:

Գոյություն ունեն վիզայի տարրեր տեսակներ

Վիզայի տեսակը կախված է Վրաստան կատարվելիք ուղևորության նպատակից: Ստորև ներկայացված են վիզայի տարրեր տեսակներ ստանալու համար սահմանված լրացուցիչ պահանջները (ի հավելումն պարտադիր պահանջների):

Բիզնես Վիզա

(Զերնարկատիրության, առևտրային նպատակներով, խորհրդաժողովի, ցուցահանդեսի, առևտրարտադրական տոնավաճառի ներկա լինելու, որպես լրագրող ժանապարհորդելու, կամ, աշխատելու կամ սովորելու համար և այլն) Որոշ դեպքերում կարող է պահանջվել հրավերի նամակ՝ հրավիրող ընկերության կողմից և երաշխավորագիր նամակ՝ գործատուից:

Մասնավոր Այցելուների Վիզա

(Ազգականների կամ ընկերների հետ մնալու կամ՝ որպես գրոսաշրջիկ ճանապարհորդելու համար)

Տարանցիկ Վիզա

1. Նպատակակետ հանդիսացող երկրի վիզա (եթե կիրառելի է),
 2. Զեր՝ դեպի Վրաստան և Վրաստանից մեկնելու հաստատված ավիատոնսի պատճենը (եթե կիրառելի է):
- Նշում. որոշ դեպքերում, կարող է պահանջվել նաև պաշտոնական նամակ՝ գործատուից:

Բազմակի Մուտքի (բիզնես) Վիզա

1. Քրավերի նամակ՝ իրավիրող ընկերությունից,
 2. Երաշխավորագիր նամակ՝ գործատուից:
- Նշում. որոշ դեպքերում, կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր:
- I. ԽՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵԼ
 - Պետք է դիմել անձամբ, ինչի համար պետք է այցելել Վրաստանի Ղեսպանատան Յյուպատոսական Բաժին՝ աշխատանքային ժամերին:
- Խնդրվում է վճարագիրը՝ չեկը դուրս գրել հետևյալ անունով՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՂԵՍՊԱՆԱՏՈՆ:
- II. Ե՞ՐՐ ԴԻՄԵԼ

Դիմումները պետք են ներկայացնել Զեր՝ ՄԹ-ից մեկնելու օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա և ոչ շուտ, քան երեք ամսվա ընթացքում: Վրաստանի Ղեսպանատան Յյուպատոսական Բաժնի աշխատանքային ժամերն են 10.00-13.00-ը՝ երկուշաբթից ուրբաթ (բացի չորեքշաբթի օրվանից): Ղեսպանատան Յյուպատոսական Բաժինը փակ է բրիտանական և վրացական տոների օրերին:

Ստորև ներկայացված են Վրաստանում պաշտոնապես նշվող ազգային տոները.

Յունվարի 1՝ Նոր Տարի

Յունվարի 7՝ Ուղղակառ Եկեղեցու Սուրբ Ծնունդ

Յունվարի 19՝ Սկրոտություն

Մարտի 3՝ Սայրերի Օր

Ապրիլի 9՝ Ազգային Տոն

Զատիկ՝ անսարվի նասին կտեղեկացվի (շարժական տոն է)

Զատիկ Երկուշաբթի՝ անսարվի նասին կտեղեկացվի (շարժական տոն է)

Մայիսիսի 9՝ Ազգային Տոն

Մայիսիսի 12՝ Մր. Էնդրյուի Օր

Մայիսիսի 26՝ Ազգային Անկախության Օր

Օգոստոսի 28՝ Սուրբ Աստվածածնի Վերափոխման Օր

Յուլիսեմբերի 14՝ «ՄՇԽԵԹՈՐԱ»

Նոյեմբեր 23՝ Մր. Գեորգիի Օր

I. ՎԻԶԱՅԻ ԶԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՐՄԱՆՎԱԾ ՏՈՒՐԵՐԸ ՄԵԿ ԱՆԳԱՄՎԱ ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱՆԵՐ՝

3 ամսով՝ : 18

Բազմակի մուտքի վիզաներ՝

1 տարով՝ : 61

Երկու անգամվա մուտքի վիզաներ՝

3 ամսով՝ : 27

Գյոյություն ունեն որոշակի պայմաններ, որոնք կիրառելի են առանց վիզայի ճանապարհորդելու դեպքում: Այս նասին ամբողջական և ավելի մանրամասն տե-

դեկատվության (առանց վիզայի Վրաստանում բնակվելու թույլատրելի ժամանակահատվածը, տեղական ոստիկանական բաժանմունքում նուտքից հետո գրանցվելը և այլն), ինչպես նաև դիվանագիտական և պաշտոնական վիզաների վերաբերյալ այլ մանրամասների և տեղեկատվության համար պետք է կապնվել Երևանում Վրաստանի Դեսպանատան Հյուպատոսական Բաժին:

ՎՐԱՍՏԱՆ

(ՍԱԿԱՐԹԵԼՈՒ ՌԵՍՊՈՒՔԵԿԱ)

Վրաստանի Դեսպանատուն

Արամի փողոց 42

Դեռ.՝ 564357, 585511

Ֆաք.՝ 564183

Էլ.-փոստ՝ geoemb@netsys.am

Աշխատանքային ժամերը՝ 10:00-19:00

Վեբ կայք՝ http://embassy.mfa.gov.ge/index.php?lang_id=ENG&sec_id=125

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Բնակության թույլտվություն ձեռք բերելու դիմում ներկայացնելու իրավունք ունի 18 տարեկան դարձած գործունակ աճման: Մինչև 18 տարեկան հասակի անձանց հարցը քննարկվում է նրանց օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Նման դեպքում անհրաժեշտ է ծնողների կամ օրինական ներկայացուցիչների նոտարով վկայագրված գրավոր համաձայնություն:

Ժամանակավոր բնակության թույլտվություն ձեռք բերելու պայմանները.

Վրաստանում ժամանակավոր բնակության թույլտվություն տրվում է 6 տարուց ոչ պակաս Վրաստանում 90 օրից ավել ժամկետով մնալ ցանկացող այն արտասահմանցուն, որը՝

ա) Վրաստանում իրականացնում է աշխատանքային գործունեություն Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան, այդ թվում ազատ մասնագիտության անձին,

բ) Բուժվելու կամ սովորելու համար Վրաստան ժամանած անձին,

գ) Հրավիրված է համապատասխան ճյուղային կառավարական հիմնարկության կողմից, որպես բարձր որակավորման մասնագետ կամ արվեստի գործիչ և նրա հրավիրումը կապվում է պետական հետաքրքրությունների հետ,

դ) Վրաստանի քաղաքացու հոգաբարձու է կամ՝ խնամակալ,

ե) Գտնվում է Վրաստանի քաղաքացու հոգաբարձության կամ խնամակալության ներքո,

զ) Վրաստանի քաղաքացու կամ բնակության թույլտվություն ունեցող արտասահմանցու ամուսին է, ծնող, զավակ, որդեգիր, որդեգրող, քույր, եղբայր, պապ կամ տատ:

է) որի մասին գոյություն ունի հիմնավոր ենթադրություն, որ նա կարող է լինել մարդկանց թրաֆիքինգի զրի “Սարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին” Վրաստանի օրենքով սահմանված դեպքերում:

ը) որը մասնակցում է ռեստիտուցիայի և փոխհատուցման հանձնաժողովի կամ հանձնաժողովի կոմիտեի կողմից իր դիմումի քննարկմանը:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՔԱՐՑԻ ՔԱՄԱՐԿԱՍԱ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՐԱՃԵԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Արտասահմանցու համար, որը Վրաստանում իրականացնում է աշխատանքային գործունեություն (այդ թվում ազատ մասնագիտության անձանց)

ա) Արտասահմանցու անձնագրի կամ ուղևորական փաստաթղթի պատճենը,

բ) Վրաստանում օրինական գտնվելը հաստատող փաստաթղթի պատճենը, եթե անձը դիմում ներկայացնելիս գտնվում է Վրաստանում (Վրաստանի այցեհրավեր, Վրաստանի պետական սահմանի հատումը հաստատող կնիքում կամ այլն):

գ) Վրաստանում աշխատելը հաստատող փաստաթուղթ (Աշխատանքային պայմանագիր կամ աշխատանքի ընդունվելը հաստատող որևէ այլ փաստաթուղթ), ազատ նաև ազգային մարդկանց համար տեղեկանք բանկից, որը արտացոլում է նրա անձնական հաշվի վրա վերջին մեկ տարվա ընթացքում գումարի շրջանառությունը,

դ) Օրինական եկամտի փաստաթուղթ,

ե) Սպասարկման վարձի վճարումը հաստատող անդորրագիր,

զ) 2 լուսանկար 3X4

2. Արտասահմանցու համար, որը Վրաստան է ժամանել բուժվելու կամ ուսանելու համար.

ա) Արտասահմանցու անձնագրի կամ ուղևորական փաստաթղթի պատճենը,

բ) Վրաստանում օրինական գտնվելը հաստատող փաստաթղթի պատճենը, եթե անձը դիմում ներկայացնելիս գտնվում է Վրաստանում (Վրաստանի այցեհրավեր, Վրաստանի պետական սահմանը հատելը հաստատող անսարվով կնիքում կամ այլն),

գ) Վրաստանի բուժական հիմնարկության տեղեկանք այն մասին, որ Անձին անհրաժեշտ է բուժում Վրաստանում կամ ուսումնական հաստատության տեղեկանք՝ արտասահմանցու ուսումնական հաստատություն ընդունվելու կամ ուսումնը շարունակելու մասին (բուժումը կամ ուսումնը հավանական երկարաձգումը մատնամշելով),

դ) Օրինական եկամտի փաստաթուղթ

ե) Սպասարկման վարձը վճարելը հաստատող անդորրագիր,

զ) 2 լուսանկար 3 X 4

3. Արտասահմանցու համար, որը հրավիրվել է համապատասխան ծյուղային կառավարական հիմնարկության կողմից, որպես բարձր որակավորման մասնագետ կամ արվեստի գործիչ, և նրա հրավերը կապվում է պետական հետաքրքրությունների հետ

ա) Արտասահմանցու անձնագրի կամ ուղևորական փաստաթղթի պատճենը,

բ) Վրաստանում օրինականորեն գտնվելը հաստատող փաստաթղթի պատճենը, եթե Անձը դիմում ներկայացնելիս գտնվում է Վրաստանում (Վրաստանի այցեհրավեր, Վրաստանի պետական սահմանի հատումը հաստատող անսարվային կնիքում կամ այլն),

գ) Վրաստանի համապատասխան կառավարական հիմնարկության հրավեր,

դ) Օրինական եկամտի փաստաթուղթ

ե) Սպասարկման վարձը վճարելը հաստատող անդորրագիր,

զ) 2 լուսանկար 3 X 4

4. Արտասահմանցու համար, որը Վրաստանի քաղաքացու հոգաբարձու է, խնամակալ կամ գտնվում է Վրաստանի քաղաքացու հոգաբարձության կամ խնամակալության ներքո:

ա) Արտասահմանցու անձնագրի կամ ուղևորական փաստաթղթի պատճենը,

բ) Վրաստանում օրինական գտնվելը հաստատող փաստաթղթի պատճեն, եթե անձը դիմում ներկայացնելիս գտնվում է Վրաստանում (Վրաստանի այցեհրավեր, Վրաստանի պետական սահմանը հատելու անսարվով հաստատված կնիքում կամ այլ),

- գ) Հոգաբարձությունը կամ խնամակալությունը հաստատող տեղեկանք,
 դ) Օրինական եկամտի փաստաթուղթ
 ե) սպասարկման վարձի վճարումը հաստատող անդորրագիր,
 զ) 2 լուսանկար 3 X 4

5. Արտասահմանցու համար, որը Վրաստանի քաղաքացու կամ բնակության թույլտվություն ունեցող արտասահմանցու ամուսին է, ծնող, որդի, թոռ, որդեգիր, որդեգրող, քույր, եղբայր, պապ, կամ տատ:

- ա) Արտասահմանցու անձնագրի կամ ուղևորական փաստաթղթի պատճեն,
 բ) Վրաստանում օրինական գտնվելը հաստատող փաստաթղթի պատճեն, եթե անձը դիմումը ներկայացնելիս գտնվում է Վրաստանում (Վրաստանի այցեհրավեր, Վրաստանի պետական սահմանի հատումը անսագրային կնիքով հաստում կամ այլն),
 գ) Բարեկամական կապը հաստատող փաստաթուղթ (ծննդյան, անուսնության, հայրությունը հաստատող, որդեգրնան կամ այլ վկայական), համապատասխան անձի Վրաստանի քաղաքացիությունը կամ Վրաստանում բնակությունը հաստատող վկայական,
 դ) Օրինական եկամտի փաստաթուղթ
 ե) Սպասարկման վարձի վճարումը հաստատող անդորրագիր,
 զ) 2 լուսանկար 3 X 4
- Համապատասխան փաստաթղերը ներկայացնելուց հետո շահագրգիռ օտարերկրացին Քաղաքացիական Ունեսուրի գործակալության տարածքային ծառայությունում, դիվանագիտական ծառայությունում կամ հյուպատոսական ծառայությունում լրացնում է էլեկտրոնային դիմուն
 - Արտասահմանում տրված փաստաթղերը պետք է ներկայացնեք Վրացերեն թարգմանված, նոտարի կողմից վկայագրված: Արտասահմանում տրված փաստաթղերը նույնպես պետք է լինեն օրինականացված կամ ապոստիլի կարգով վկայագրված:
 - Ժամանակավոր բնակության թույլտվություն ծեռք բերելու մասին դիմումը քննարկելու ժամկետը չպետք է անցնի Քաղաքացիական Ունեսուրի գործակալության տարածքային ծառայությունում փաստաթղերը լրիվությամբ ներկայացնելուց 30 օրից:
 - Ժամանակավոր բնակության թույլտվության դիմումի կապակցությամբ 10-րդ օրը որոշման համար սպասարկման վարձը 380 լարի է, 20-րդ օրը՝ 300 լարի և 30-րդ օրը՝ 180 լարի:
- Վրաստանում ժամանակավոր բնակության թույլտվության երկարաձգումը կատարվում է նույն պայմաններին համապատասխան, ինչպիսին նրա տալն է:

ՄԵՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԶԵԽԸ ԲԵՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վրաստանում մշտական բնակության թույլտվություն կարող է տրվել.

- ա) Արտասահմանցուն, որը Վրաստանում օրինական կերպով ապրել է վերջին 6 տարվա ընթացքում: Այս ժամկետում չի հաշվվում Վրաստանում ուսանելու կամ բուժվելու նպատակով բնակության և դիվանագիտական և դրան հավասարեցված ներկայացուցչություններում, աշխատանքի ժամանակաշրջանը,
- բ) Վրաստանի քաղաքացու ամուսնում, ծնողին, որդում, որդեգրին, քրոջը, եղբորը, պապին և տատին,
- զ) Գիտության որևէ ճյուղի բարձր որակավորման մասնագետ-տեխնիկներին, մարզիկներին և արվեստի գործիչներին, որոնց ժամանումը համապատասխանում է Վրաստանի շահերին:

դ) Անձին, որի նկատմամբ ռեստիտուցիայի և փոխհատուցման հանձնաժողովը կամ հանձնաժողովի կոմիտեն ընդունել է որոշում գույքային ռեստիտուցիայի, համանման (փոխարենը) անշարժ գույք վերադարձնելու կամ գույքային վճասի փոխհատուցման մասին:

ՄԵՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼԵՎՈՒԹՅՈՒՆ ԶԵՐՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՍԱՐԿԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԱՆՀՐԱԺԵԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Արտասահմանցին, որը Վրաստանում օրինական կերպով բնակվել է վերջին 6 տարվա ընթացքում.

ա) Արտասահմանցու անձնագրի կամ ուղևորական փաստաթղթի պատճեն,
բ) Վրաստանում օրինական գտնվելը հաստատող փաստաթղթի պատճեն, եթե Անձը դիմումը ներկայացնելիս գտնվում է Վրաստանում (Վրաստանի այցեղավեր, Վրաստանի պետական սահմանի հատումը ամսաթվով հաստատող կնիքում կամ այլն):

գ) Առողջության մասին տեղեկանքներ (բորոտություն, ՄԻԱՎ հարուցիչ-Զիավ, տուբերկուլյոզ),

դ) Վրաստանում վերջին 6 տարվա ընթացքում օրինական բնակության փաստը հաստատող փաստաթուղթ,

ե) Օրինական եկանտի փաստաթուղթ

զ) Սպասարկման վարձի վճարումը հաստատող անդորրագիր,

է) 2 լուսանկար 3 X 4

2. Վրաստանի քաղաքացու ամուսնուն, ծնողին, որդուն, թոռանց, որդեգրին, քրոջը, եղբորը, պապին, տատին.

ա) Արտասահմանցու անձնագրի կամ ուղևորական փաստաթղթի պատճեն,

բ) Վրաստանում օրինական գտնվելը հաստատող փաստաթղթի պատճեն, եթե Անձը դիմումը ներկայացնելիս գտնվում է Վրաստանում (Վրաստանի այցեղավեր, Վրաստանի պետական սահմանի հատումը ամսաթվով հաստատող կնիքում կամ այլն):

գ) Առողջության մասին տեղեկանքներ (բորոտություն, ՄԻԱՎ-հարուցիչ, Զիավ, տուբերկուլյոզ),

դ) Բարեկամական կազմ հաստատող փաստաթուղթ,

ե) Օրինական եկանտի փաստաթուղթ

զ) Սպասարկման վարձի վճարումը հաստատող անդորրագիր,

է) 2 լուսանկար 3 X 4

3. Արտասահմանցին, որը գիտության բնագավառի բարձրորակ մասնագետ-տեխնիկ է, մարզիկ և արվեստի գործիչ, որի ժամանումը համապատասխանում է Վրաստանի հետաքրքրություններին:

ա) Արտասահմանցու անձնագրի կամ ուղևորական փաստաթղթի պատճեն,

բ) Վրաստանում օրինական գտնվելը հաստատող փաստաթղթի պատճեն, եթե Անձը դիմումը ներկայացնելիս գտնվում է Վրաստանում (Վրաստանի այցեղավեր, Վրաստանի պետական սահմանի հատումը ամսաթվով հաստատող կնիքում կամ այլն):

գ) Առողջության մասին տեղեկանքներ (բորոտություն, ՄԻԱՎ-հարուցիչ-Զիավ, տուբերկուլյոզ),

դ) Վրաստանի համապատասխան կառավարական հիմնարկության իրավեր,

ե) Օրինական եկանտի փաստաթուղթ

զ) Սպասարկման վարձի վճարումը հաստատող անդորրագիր,

է) 2 լուսանկար 3 X 4

ԱՌԱՆՋԱՎԱՏՈՒԿ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանում մշտական բնակության իրավունք ստանալու հատուկ թույլտվություն չի պահանջվում հետևյալ կարգի օտարերկրացիներից.

ա) Անձանց, ովքեր 1993 թվականի մարտի 27-ի համար մշտապես բնակվում էին Վրաստանի տարածքում և Վրաստանի քաղաքացիներ չեն հաշվել, եթե 1993 թվականի մարտ 27-ից հետո չեն հանվել Վրաստանում մշտական գրանցումից:

բ) Անձանց, որոնց (քաղաքացիությունից դուրս գալու կամ քաղաքացիությունը կորցնելու ձևով) Վրաստանի քաղաքացիությունը դադարեցվել է և նրանք մշտապես բնակվում են Վրաստանում:

Խորհրդատվության և դիմում ներկայացնելու համար կարող եք դիմել արտասահմանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական ծառայություններին, քաղաքացիական ռեեստրի գործակալության Զուգդիդի, Թելավի, Ծալկայի, Լիմոնմինդայի, Ախալքալաքի, Ախալցիխեի, Մցխեթայի, Մառնեուլիի, Արխազիայի, Բոլնիսի, Ռուսթավի, Քութախի, Սամտրեդիայի, Բաթումիի և Թբիլիսիի բոլոր ծառայություններին:

Դիմումը հանձնելուց հետո տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել այն դիվանագիտական ներկայացուցչությանը, հյուպատոսական ծառայությանը կամ քաղաքացիական ռեեստրի գործակալության նույն ծառայությանը, որտեղ հանձնել եք դիմումը:

ՎՐԱՍՏԱՆԻ ԶԱՂԱՔՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԸ

Դիմում ներկայացնելը

Վրաստանի քաղաքացիություն ստանալու, Վրաստանի քաղաքացիությունը վերականգնելու, Վրաստանի քաղաքացիությունը որոշելու, Վրաստանի քաղաքացիությունից դուրս գալու և Վրաստանի քաղաքացիությունը կորցնելու մասին գրավոր դիմումները և հարցը քննարկելու համար անհրաժեշտ փաստաթղթերը շահագրգիռ անձինք մտցնում են Վրաստանի արդարադատության նախարարության կառավարման ոլորտում գործող հանրային իրավական իրավաբանական անձ՝ Քաղաքացիական Ռեեստրի գործակալություն (հետագայում՝ գործակալություն) կամ գործակալության տարածքային ծառայություն (հետագայում՝ տարածքային ծառայություն):

Վրաստանի սահմաններից դուրս բնակվող անձանց գրավոր դիմումները և հարցի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերը մտցվում են արտասահմանում Վրաստանի համապատասխան դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկություն, կամ ուղիղ ուղարկվում են Վրաստանի նախագահին:

Դիմումները և կցված փաստաթղթերը ներկայացվելու են պետական լեզվով: Այլ լեզվով կազմված փաստաթղթերը ընդունվում են համապատասխան կարգով ստուգված ձևով, վրացերեն թարգմանության հետ միասին:

Քաղաքացիության հարցերով դիմումները հետաքրքրվող անձինք ներկայացնում են անձանք, լիազորագիր ունեցող անձի կամ փոստի միջոցով: Օրենքով նախատեսված դեպքերում, 14-ից 18 տարեկան անձի կողմից դիմումի հետ միասին պետք է ներկայացվի նոտարական կարգով վկայագրված օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությունը: Մինչև 14 տարեկան հասակի անձանց քաղաքացիության հարցը քննարկվում է նրանց օրինական ներկայացուցչի կողմից դիմում ներկայացնելու հիման վրա:

Վրաստանի քաղաքացիության որոշում

ա) Անձին, որը առնվազն հինգ տարի կամ օրենքը գործարկվելու օրվա համար (1993 թվականի մարտի 25) ճշտապես բնակվում էր Վրաստանում, եթե վեց ամսվա ժամկետում գրավոր չի հրաժարվել Վրաստանի քաղաքացիությունից:

